

Ա.Ս. ՊՈԻՇԿԻՆ

ԲԱՆԶՈՒՍԱՐԱՅԻ ՇԱՏՐՎԱՆԸ



19. ՀԱՅՊԵՏԱՐԱՆ. 37

891 Պ.
7-97

1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
16
17
18
19
20
21
22
23
24
25
26
27
28
29
30
31
32
33
34
35
36
37
38
39
40
41
42
43
44
45
46
47
48
49
50
51
52
53
54
55
56
57
58
59
60
61
62
63
64
65
66
67
68
69
70
71
72
73
74
75
76
77
78
79
80
81
82
83
84
85
86
87
88
89
90
91
92
93
94
95
96
97
98
99
100

1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
16
17
18
19
20
21
22
23
24
25
26
27
28
29
30
31
32
33
34
35
36
37
38
39
40
41
42
43
44
45
46
47
48
49
50
51
52
53
54
55
56
57
58
59
60
61
62
63
64
65
66
67
68
69
70
71
72
73
74
75
76
77
78
79
80
81
82
83
84
85
86
87
88
89
90
91
92
93
94
95
96
97
98
99
100

А.В.ШУБИН

НАТНОФ АНХЭНДЭГЭНУРАД


СЭДЭН БЛАНК
УСЭГДЭН СЭНДЭГ

У.С.А. ТӨГӨМӨНӨН

А.С.Пушкин

БАХЧИСАРАЙСКИЙ ФОНТАН

ПЕРЕВОД С РУССКОГО
СУРЕН ВАГУНИ



А. С. С. Р. ГОСУДАРСТВЕННОЕ ИЗДАТЕЛЬСТВО
ЕРЕВАН 1937

891.71
7-97
www

Ա.Ս. Պուշկին

19 NOV 2010

22 JUN 2007

ԲԱԽՑԻՍԱՐԱՅԻ ՇԱՏՐՎԱՆԸ

ՌՈՒՍ. ԹԱՐԳՄԱՆԵՑ
ՍՈՒՐԵՆ ՎԱՅՈՒՆԻ



ՀԽՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1937

23 JUL 2013

18 NOV 2012

Handwritten text in Georgian script, likely a title or address, appearing as a mirror image.

Handwritten text in Georgian script, appearing as a mirror image.

Handwritten text in Georgian script, appearing as a mirror image.




938
38

Handwritten text in Georgian script, appearing as a mirror image.



ԲԱՆԶԻՍԱՐԱՅԻ
ՇԱՏՐԿԱՆԸ





Շատերն, այնպիսի ինչպես յիվ լիս, այցելել են սույն
 օտարվանը, բայց վաճառք նրանցից չկան արդեն. ուրիշները
 օրագայում են հեռաձայններով:

Ս ա ա դ ի

Գիրքին եր նստել հայացքը մոլոր,
 Բերնին՝ մխացող սաթյա ծխամորե.
 Խռնվել եր անեղ խանի չորս բոլոր
 Ստրկաբարո արբունիքը վողջ:
 Ամեն ինչ խաղաղ, լուռ եր պալատում.
 Յերկյուղածությամբ խոնարհված նրան՝
 Մռայլված դեմքին վշտի ու ցամառ
 Նշաններն ելին ամենքը կարդում:
 Բայց իշխանավորն անհղաժողով
 Ձեռքով անհամբեր նշան է անում.
 Գնում են նրանք խոնարհ ու անխոս:

Մենակ և նա իր առանձնարանում.
 Կուրծքը ավելի ազատ է շնչում:
 Ճակատն ավելի ժիր կենդանությամբ
 Մատնում է սրտի հուզումն ահագին:
 Այդպես և ծովի դողդոջ ապակին
 Միշտ արտացոլում յերկինքը սեփամպ:


Ի՞նչն է փոթորկում զոռ հոգին նրա.
 Ի՞նչ մտքով է նա զբաղված արդյոք.
 Գնում է նորից Ռուսիայի վրա՞,
 Լեհաստանն է նա յենթարկել ուզում,
 Վառվում է վոխո՞վ արյունաձարով,
 Թե իր բանակում նկատել է դավ,
 Լեռնականներե՞ց է, արդյոք, սարսում,
 Թե Ջենովայի դավերից խարդախ:

Վո՞չ, ճանձրալի յե ռազմի փառքը սին,
 Հոգնել և արդեն բազուկն ահարկու,
 Յեվ չի մտածում նա կովի մասին:



Գուցե մի անարգ զավաճանութիւն
 Մուտք ե գործել իր հարեմը լռին,
 Յեւ նա—գերութեան դուստրը հեշտասուն
 Իր սիրտն ե ծածուկ հանձնել գլուխին:

Վո՛չ, Գիրեյ խանի կանայք մշտավախ,
 Վոր սիրտ չեն անում մտածել, ցանկալ,
 Տրտում անդորրում փթթում են խաղաղ:
 Հսկողութեան տակ աշխուրջ ու պաղ,
 Ջանձրութի գրկում միշտ անմխիթար
 Նրանք չգիտեն դավաճանութիւն:
 Պահվում ե նրանց հրմայքն անվրթար
 Հարեմի ստվերում անձայն ու թագուն.
 Այդպէս հարավի ծաղիկն ե ապրում՝
 Հպված ջերմոցի տխուր ապակուն:
 Ու նրանց համար, հերթով անընդհատ,
 Որեր, աճիւններ, տարիք են անցնում,
 Իրենց հետ մեկտեղ նրանք աննկատ
 Տանում են յե՛ւ սեր, յե՛ւ ջահելութիւն:



Միանման ե ամեն որը ջոկ,
 Ծանր են ժամերը հարեմի ծոցում,
 Ուր կյանքն ե վարում ծուլութունն անհոգ:
 Հանուլքն ել այնտեղ քիչ ե առկայծում:
 Դեռահաս կիներն այն ցանկանալով
 Մրտերը իրենց խաբել մի բանով,
 Փոխում են անվերջ հագուստներ շրթեր,
 Զրույց են անում, խաղում միասեղ,
 Կամ թե ջրերի աղմուկում կայտառ՝
 Նրանց թափանցիկ շիթերից վերել—
 Մահուն խմբերով՝ զով, խտատերել
 Սոսիների տակ շրջում անդադար:
 Ներքինին նրանց միշտ հսկում ե չար:



938 38

Այնտեղ նրանից փախչելն և իզուր.
Հայացքն իր խանդոտ, լսելիքը սուր
Հետեւում և միշտ ամեն մի բանի:
Նրա ջանքերով մտել և այնտեղ
Հավերժական կարգ: Յեւ կամքն և խանի
Նրա համար լոկ կանոն ու որենք.
Նա չի կատարում նույնքան խստորեն
Պատվիրանը սուրբ անգամ Ղուրանի:


Նրա չոր հոգին սեր չի աղերսում,
Նա, ինչպես արծան, տանում է, լսում
Ծաղր, ատելություն, խոնարհ աղաչանք,
Վիրավորանքներ, չարանքի խաղ,
Հայացքներ յերկշուտ, խաղաղ հառաչանք,
Զար արհամարհանք, տրտունջներ նվաղ:




Հայտնի յե նրան բարբր կանացի.
Յեվ գիտե փորձով՝ նենգ ե նա վորքան,
Թե գերության մեջ, թե ազատության.
Քնքուշ հայացքը, յեվ անխոս լացի
Կշտամբանքները չեն տիրապետում.
Չեն իշխում բնավ նրա չար հոգուն.
Նա նըրանց արդեն ել չի հավատում:

Յերբ յերիտասարդ կիները գերի,
Արձակած իրենց մազերը շքեղ
Լողանալու յեն գնում շոգերին,
Յեվ յերբ թափվում ե նրանց նրբագեղ
Մարմնին սառնորակ ջուրն աղբյուրների,--
Այդտեղ ե նրանց անբաժան ծառան
Ու դիտում ե նա աչքով անտարբեր
Գեղանի կանանց խումբը մերկիրան:






Անձայն քայլերով գիշերը խավար
 թափառում է նա հարեմում՝ անբուն,
 Գորգերն և կոխում նա ըզզուշարար,
 Դռների յետով կանգնում և թագուն,
 Մահիճից մահիճ և անցնում անձայն
 Ու միշտ հոգատար հակում խանական
 Կանանց հանգիստը՝ փարթամ, վեհանիւնը.
 Գիշերվա ամեն թոթովանք ու շունչ,
 Սարսուռ կամ հառաչ, ամեն-ամեն ինչ
 Նկատում է նա յեվ ազան լսում.
 Յեվ վայ է նրան, ով վոր յերագում
 Ուրիշի անուն շշնշա մի՛ որ,
 Կամ թե բարեհաճ իր ընկերուհուն
 Վստահի իրեն մտքերն ախտավոր:




Ել ի՞նչ ե վիշտը ճնշում Գիրեյին.
Ծխամորճն արդեն հանգել ե ձեռին.
Լուռ, նշանի յե սպասում դռան մոտ՝
Իր շունչը պահած, անշարժ ներքինին.
Տերը մտազբաղ՝ վտարի յե կանգնում.
Նրա հանդիման ահա դուռը բաց,
Դեպի կացարանն ե անխոս դիմում՝
Վոչ վաղուց իրեն սիրելի կանանց:




Յեզ սպասելով հայտնվելուն խանի,
 Խռնված ափերին ժիր շատրվանի,
 Դորգերի վրա մետաքսանկար
 Կանայք նստոտած խմբերով կայտառ.
 Հետեւում ելին մանկան խնդությամբ,
 Թե ինչպես վարում—ջրերում հատակ,
 Մարմար հատակին ձուկն ե լողում ծուլ,
 Ու նետում ելին ձկնիկին, դիտմամբ,
 Վոմանք նրանցից գինդեր վոսկեծուլ:





Մինչ ստրկունիք չորս կողմից նրանց
Մատուցում ելին անուշ ոշարակ,



Ու նրանց զնգուն խմբերգից հանկարծ
Թնդաց հարեմի շենքը բովանդակ:





ԹԱԹԱՐԱԿԱՆ ՅԵՐԳ

1

«Արցունքի, վշտի փոխարեն մարդուն
Յերկիրը վերուստ հատուցում է լի-
Յերջանիկ և խեղճ ֆալիրն ել անտուն,
Թե ծերանալով՝ Մեքքա այցելի»:

2

Ով սրբագործի վեճ Դանուբ գետի
Յեզերքն իր մահով—յերջանիկ և նա.
Կրքոտ ժըպիտով կույսը դրախտի
Նրան ընդառաջ պիտի սլանա:

3

Բայց նա չե, Զարեմ, յերջանկագուն մարդ,
Ով վոր սիրելով հեշտանք ու անդորր,
Կզգվի, անուշ, բեզ, ինչպես մի վարդ,
Այստեղ—հարեմի լուսնյան մեջ խոր»:

Յերգում են: Բայց նա—Զարեմն ու՞ր է, ու՞ր,
Աստղիկը սիրո, զարդը հարեմի.
Ավա՛դ, նա նստած գունատ ու տխուր,
Գովերգը նրանց չի լսում հիմի.
Արմավենու պես՝ նկուն, հողմահար,
Գլուխն իր ջահել խոնարհել է վար,
Ձի գալիս աչքին վոչինչ աշխարհում
Զարեմին Գիրեյն արդեն չի սիրում:

Նա դավաճանեց... Բայց բեզ հետ այն ո՞վ,
Զքնազ վրացուհի՛, կմրցի գեղով:
Քո շուշանափայլ ճակատի բոլոր
Ծամերդ ես հյուսել դու կրկնավորոր,
Զույգ աչքերը քո՝ սեվ ու հրմայիչ
Մութն են գեշերից, ցերեկից ել ջինջ:




Ո՞ւմ ծայնն ե մատնում ավելի ուժգին
Վառվող ցանկության պոռթկումները բոց,
Ո՞ւմ զըզվանքներն են այնքան խորախոց,
Քան քո համբույրը ջերմ ու քնքշագին:
Ի՞նչպես սիրտը այն, վոր լի յե քեզնով
հարող ե տրոփել ուրիշի համար,
Բայց Գիրեյն անհոգ ու դաժանաբար
Արհամարհեց քո գեղը հոգեթով:
Ու ցուրտ ժամերին իր գիշերային
Նա միշտ ել մենակ, մռայլ ե լինում,
Այն որից, յերբ վոր լեհ իշխանուհին
Փակված ե անդարձ նրա հարեմում:



Վաղուց չեր, ինչ վոր մանկամարդ Մարին
Աչք հառեց ոտար յերկնակամարին,
Վաղուց չեր, նա իր գեղով դուրեկան
Ծաղկում աշխարհում իրեն հարազատ:
Հպարտ նրանով՝ հայրը ալեգարդ
Իր սփոփանքն եր համարում նրան,
Յեւ նրա կամքը պատանեկական
Պետք ե հոր համար միշտ որենք լիներ:
Ու նրա միակ հոգսն իր մշտապես,
Վոր բախտը իրեն սիրելի դատեր
Պարզորոշ լիներ գարնան որվա պես,



Վոր նույնիսկ վշտերն այն վայրկյանական
 Չմոռայլեյին աղջրկա հոգին,
 Յեւ ամուսնացած լինելով անգամ
 Խանդաղատանքով հիշեր նա կրկին
 Որերն հաճույքի, որերն աղջկական՝
 Անցած՝ դյուրասահ յերազի նման:
 Դյուծում եր մարդու նա ամեն ինչով,
 Խաղաղ իր բարքով, նազուն շարժումքով,
 Յեւ իր աչքերով կապուտակ ու ջինջ:
 Բնության տված ծիրքերը թովիչ
 Ջարդարում եր նա նրբին արվեստով:
 Կենդանացնում եր տավրով մոզական
 Խնճուղքները ճոխ, ընտանեկական:




Զքնաղ Մարիի ծեռքն եյին փնտռում
 Անթիվ հարուստներ, իշխաններ հայտնի,
 Յեւ շատ ջահելներ տանջվելով զաղտնի
 Մարիի համար հալ ու մաշ լինում:
 Բայց նա իր հոգում խաղաղ ու անդորր
 Դեռ սեր չգիտեր: Դղյակում իր հոր,
 Իրեն մտերիմ աղջիկների հետ,
 Հանգիստ որերը անկախ ու անհոգ
 Զրվարճության եր նըվիրում նա լուկ:



Վաղու՞ց երբ Յեզի՞ն էր թաթարների հոծ
Ամբոխն ինչպե՞ս գետ Հեհաստան խուժեց,
Զի փռվում արտում հրդեհն հողմարոց
Նույն արագությամբ սոսկալի ու մեծ:






Վորըացավ հանկարծ յերկիրը ծաղկած,
Պատերազմներից դարձավ խեղանդամ:
Անցան զվարճանքն ու կյանքը հանգիստ.
Գյուղեր, անտառներ լուռ են, տրտմանիստ.
Յեվ ամայացավ դղյակը փարթամ:

Լուռ ե Մարիի սենյակն առանձին...
Տան յեկեղեցում, ուր սառըն նիրհով
Մասունք են հանգչում իրենց թագերով
Յեվ իշխանական զինանիշերով:
Կանգնած ե մի նոր գերեզման կրկին...
Հայրը շիրիմում, դուստրը գերիվար,
Ժառանգն ե ժլատ՝ իշխում դղյակին
Ու նրսեմացնում լուծով ծանրագին
Յերկիրն ամայի յեվ անմխիթար:

Բախչիսարայի պալատը, ավա՛ղ,
Թագցնում ե լուռ՝ ջահել դշտուհուն,
Այժմ գերության զրկի մեջ խաղաղ
Թռչնելով՝ Մարին լալիս ե, տխրում:



Խանն ե անբախտին սակայն խնայում:
 Հուզում են խանի քունը կարճատևով
 Արցունքը նրա, հառաչն անհանգիստ,
 Յեվ նրա հաճար դարձրել ե թեթեւ
 Նա իր հարեմի որենքները խիստ:
 Ձի այցում կուլսին, գիշեր կամ ցերեկ,
 Խանական կանանց խստադեմ ծառան,
 Ու իր հոգատար ձեռքերով նրան
 Դեպի մահիճը չի տանում յերբեր:
 Ձի համարձակվում յերբեր աղջկան
 Իր վիրավորիչ հայացքը հառել:
 Ու Մարին ծածուկ իր լողարանում,
 Ստրկուհու հետ, մենակ ե մնում:
 Ձի համարձակվում խանն իսկ խռովել
 Տխուր հանգիստը իր չքնաղ գերու,
 Ու թույլ ե տրված հարեմի հեռու
 Մի բաժնում նրան ապրել միայնակ,
 Յեվ թվում ե այդ առանձնարանում
 Թագչում ե մի վոչ յերկրային եյակ:
 Գիշեր ու ցերեկ այնտեղ տիրամոր
 Պատկերի առաջ կանթեղ ե վառվում,
 Լուսթյան մեջ հուլան ու հավատը խոր,—
 Վշտահար հոգու սփռվանքն այդ,—
 Վաղուց ապրում են այնտեղ միասին
 Յեվ հիշեցնում են սրտին անընդհատ
 Մերձավոր, վրսեմ աշխարհի մասին...




Աղջիկը այնտեղ թափում է արցունք,
Խանդոտ կանանցից հեռու յեվ ծածուկ:
Յեվ մինչ թաղված է չորս կողմն ամեն ինչ
Հիմա հեշտանքում այն խելացնոր,
Հրաշքով ազատված անկյունն հեռավոր
Պահպանում է խիստ սրբությունը ջինջ:
Այսպես ել սիրտը մոլության զոհի
Հափշտակության մեջ ել ախտակիրք
Պահպանում է միշտ մի սուրբ յերաշխիք,
Մաքուր զգացմունք մի աստվածային...
.




Իջավ գիշերը. ծածկվեցին մութով
 Տավրիկյան դաշտերն, ահա, քաղցրաթով.
 Մոխակի յերգն եմ լսում յես հեռվում,
 Դափնեծառերի խաղաղ հովանում:
 Լուսինն ե ծագում աստղերի խմբով
 Ու սփռում իր խոնջ շողերը չորս դին:
 Մութ անտառներին, լեռներին, հովտին:
 Պարուրված իրենց հերմակ քողերով,
 Մտվերների պես թեթեւ, վետվետուն,
 Անցնում են շտապ ահա տնից տուն
 Բախչիսարայի փողոցներով նեղ
 Պարզ թաթարների կանայք, վոր մեկտեղ
 Կիսեն իրիկվա ժամերը անբուն:
 Լռեց պալատը. հեշտանքի գրկում




Հարեմը մտավ անխռով, խոր նինջ:
Ու չի խանգարում այս ժամին վոչինչ
Գիշերը խաղաղ: Զննել եւ չորս կողմ
Պահակն հուսալի, զգաստ ներքինին:
Քնած եւ նա այժմ, բայց անը կրկին
Տագնապում եւ իր քնահար հոգին,
Դավաճանության եւ նա միշտ սպասում,
Վոր իրեն հոգուն հանգիստ չի տալիս:
Թվում եւ հաճախ ինչ վոր փսփսուկ,
Ինչ վոր խշխշոց, ճիչեր եւ լսում
Ու իրեն խաբող ծայնը լսելիս
Արթնանում եւ նա, դողում ու ելի
Լսելիքն եւ սուր սարսափած լարում:
Բայց լուռ եւ չորս դին, լուռ ու հեշտալի:
Միայն մարմարյա խորքից՝ քաղցրածայն
Շատրվաններն են դեպի վեր զարկում,
Յեւ իր սիրելի վարդից անբաժան
Սոխակն եւ մթնում իր յերգը յերգում:
Յերկար եւ նրանց լսում ներքինին,
Մինչեւ վոր նորից հանձնվի քնին:



Ի՞նչ լավ ու շքեղ և արեւելքի
 Մութ գիշերների հմայքը խափար.
 Ի՞նչ քաղցր են նրանց ժամերը հոսում
 Մարգարեապաշտ այս մարդկանց համար:
 Ի՞նչ պիտի հեշտանք նրանց տներում,
 Այն կախարդական մութ ալյուրներում,
 Հարեմների մեջ լուռ ու անվտանգ,
 Ուր ամեն մի բան լուսնյակի ներքո
 Լի յե լուռ թյամբ, խորին գաղտնիքով
 Յեւ ներշնչումով մի քաղցրահեշտանք:





Քնած են կանայք: Լոկ մեկն ե արթուն:
Շնչասպառ, տեղից յելում ե նա վեր:
Գնում ե, ահա, ձեռքով անհամբեր
Բացում ե դուռը: Գիշերվա մթնում
Նա թեթեվաքայլ առաջ ե գնում...
Դե՛մը, նիրհելով վախկոտ, մշտահոգ,
Ծերուկ ներքինին ե ահա պառկել:
Ա՛խ, սիրտն ե նրա անողոր ու պաղ,
Խաբուսիկ ե շատ յեվ քունը խաղաղ...
Կինը վոգու պես՝ անցավ անարգել:


Դուռն եր նըրա դեմ. տարակուսանքով՝
Ամուր փակին ե անաղմուկ դիպչում՝
Մըթան մեջ նըրա ձեռքը դողդոջուն:
Մտավ, իր շուրջն ե դիտում զարմանքով...
Պատում ե նրան ահ խորհրդավոր:
Ահա կանթեղի լույսը մենավոր,
Տապանակն ահա թույլ լուսավորված,
Հեզ կերպարանքը ամբիծ տիրամոր
Յեվ խաչը՝ սիրո նիշը սրբազան...
Վողջը, վրացու՛հի, քո հոգում հանկարծ
Արթնացրեց ինչ վոր հարազատ մի բան
Յեվ խոսեց նորից վաղուց մոռացված
Որերի բոլոր հնչյուններով հին:





Դեմը պառկած ե նա՝ իշխանունին,
 Յեվ խորունկ ջերմից կուսական նիրնի
 Այտերն են վառվում ու, դեռ ցույց տալով
 Հետքերը խոնավ արտասուքների,
 Կուսավորված են հոգնաբեկ ժպտով:
 Իր լույսն ե տալիս լուսինն եւ այդպես՝
 Ծաղկին, ծանրացած անբեկի շիթով:
 Յեղեմի վորդին, հրեշտակը ասես
 Յերկնքից իջել, սավառնել ե վար
 Յեվ խոր քնի մեջ արցունք ե թափել
 Հարեմի անբախտ զերունու համար:
 Ավա՛ղ, քեզ, Զարե՛մ, ի՞նչ ե պատահել...
 Կուրծքն ե կծկրվում նրա վշտահար,
 Ծնկներն են ահա ծալվում ակամա,
 Յեվ աղոթում ե. «զթա՛ ինձ, զթա՛,
 Յեվ մի՛ մերժիր իմ պաղատանքը դու...»:
 Յեվ կույսի խաղաղ բունն են ընդհատում
 Խոսքերը նրբա, շարժմունք ու հառաչն
 Ու իշխանունին ահով իր առաջ
 Անձանոթ կնոջ դեմքն ե նկատում:





Շփոթված, ձեռքով դողդոջ՝ վարանոտ
Նա վեր ե հանում նրբան ու ասում.
«Ո՞վ ես... գիշերվա պահին միայնակ
Ի՞նչ ունիս այստեղ»։—«Յես յեկա քեզ մոտ,
Փրկի՛ր ինձ, փրկի՛ր, իմ կյանքում մենակ
Հույսն ե մնացել ինձ այսուհետեւ...
Վայելեցի բախտն յերկար ժամանակ,
Որ-որին յեղա անհոգ ու թեթեւ,
Յեւ վայելքն անցավ ինչպես մի ըստվեր.
Կործանվում եմ յես. բայց լսիր ինձ, դու.
Ծնունդ առա յես վոչ այստեղ, հեռու,
Հեռու մի յերկրում... բայց մինչ որս ել դեռ
Անցած օրերի դեպքերը բոլոր
Հիշողությանս մեջ քանդակված են խոր.
Յես հիշում եմ մեր լեռներն յերկնաբարձ,
Լեռներում հոսող հեղեղները գիժ,
Հիշում եմ մեր խիտ անտառներն անանց,
Ուրիշ որենքներ յեվթարքեր ուրիշ։





Դիտար մրցմոյ սաւ մը եկմադ իրց
 ժլոյտումն ուրտ վրտիտտ եղնաթ
 Դիտթլոթուրամ ուրտմգտտո եղնաթ
 ժլոտաշոյ ռս մմսնդո իսնդմտղմ ուրցմկ
 Դոտնոտղոտմ իւրտոթ ըվ ուրցոն
 Դոտթլոթաշմփ մնտոժ Դլթոտտ սմվո
 Էոյ իդր նոտնոտոյ իստմ յրտոտո յո
 ոդր վրց տրսնտոթ տրսմթիտոմ տմմ
 Լտտտոյ տրսմմսնդո վրցմոյ տշվր յո
 Դոթի Դթլ մդտշի Դթլ տրվոյ իրցվրտ սոյ
 Զոյվ ուրց մտալ

...Զոտջոտի մմթմոմ տտշ
 Եկմդդտոտնտտտ Լդդոլտ ուսնտոթ իրց
 ուրտվր տրսշվոյ տոյ ուրս ոդր Դդտվե մո
 Դրտ ըվ ուրցոթմդնդր վրցմմոյ վնաթ
 Եկտոլոմ մսի ըվ իրր Ժսննտտ Դսնդվ նտոյ


Ասաց ու հանկարծ չքացավ: Մարիան
Ձի համարձակվում հետեւել նրբան:
Հասկանալի չե անմեղ աղջրկան
Տանջահար անող կրքերի լեզուն,
Բայց ծայնն ե նրանց անորոշ լսում
Յնվ սարսափելի յնվ ոտարոտի:
Ի՞նչ արցունք, աղոթք նրան այս անգամ
Անպատվությունից պիտի ազատի:
Ի՞նչ ե սպասում: Մի՞թե դառնահամ
Ջահել որերի մնացորդը կարճ՝
Նա կապրի, վորպես անարգված մի հարն:
Ո՛ր, տեր իմ, յեթե Գիրեյը համառ
Թողներ հեռավոր զնդանի մեջ այս
Թշվառ աղջրկան, ընդմիշտ մոռանար,
Յնվ կամ թե հանկարծ մահը վաղահաս
Ընդհատեր նրբա կյանքը վշտահար,
Ի՞նչ ուրախությամբ տրամադիրտ Մարին
Հրաժեշտ պիտի տար տխուր աշխարհին:
Կյանքի թանկագին պահերն իր համար
Անցել են արդեն, վաղուց ել չկան:
Ի՞նչ ունի կյանքում նա այս անապատ:
Ժամ ե. Մարին, թշվառ աղջկան
Ահա, կանչում են ժպտով հարազատ
Դեպի զիրկն յերկնի—խաղաղ ու ազատ:
.



Սլացան որեր. չկա Մարիան,
 Մի ակնթարթում վորբուհին մարեց,
 Աշխարհն ըղձալի նա լուսավորեց
 Այնտեղ՝ մի նորեկ հրեշտակի նման.
 Բայց ի՞նչը դագաղ մըտցրեց նրան.
 Անհույս գերության վիճար, թե անբուժ
 Մի հիվանդութիւն, կամ աղե՞տ մի այլ.
 Ով գիտե. Ձկա ել Մարին քնքուշ:




Յեւ ըսպատումով անորոշ՝ խանին
Մենք ներկայացանք։ Սրահում լուին
Հայացքն իր պայծառ հառել եր նա ինձ,
Ինձ կանչեց իր մոտ... յեւ այդ որվանից,
Անընդհատ հարբած զմայլանքով, մենք
Յերջանիկ ելինք։ Յեւ վոչ մի անգամ
Վոչ բամբասանքը յեւ վոչ ել չարկամ
Խանդի տանջանքը, կասկածները նենգ,
Վոչ ել ծանծրույթը մեզ չեյին հուզում։
Մարի՛, հայտնվեցիր դու նըրան մի որ։
Ավա՛դ, այդ որից ինչ վոր հանցավոր
Խոհով մռայլվեց նըրա գոռ հոգին։
Դավաճանելով Գիրեյն արդեն ինձ,
Ականջ չի դնում իմ նախատիւքին։
Չանձրանում ե նա իմ ախ ու վախից,
Ըզգացմունքները անցած ու նախկին,
Զրույցներն ինձ հետ՝ ել չկան բնավ։
Դու չես մեղսակից նըրա հանցանքին,
Մեղավոր չես դու, գիտեմ յես այդ լավ...



Յով, ախպես, լսիր. զեղեցիկ եմ յես.
 Ամբողջ հարեմում միայն դու յես, վոր
 կարող ես լինել ինձ շտանգավոր.
 Բայց կրթի՛ համար ծնունդ առա յես.
 Ձեռ կարող յերբեք դու սիրել ինձ պես,
 ել ինչո՞ւ սառն հմայքով հիմա
 Նրբա թուլակամ սիրտն ես տագնապում.
 Թող ինձ Գիրեյին. միայն իմն ե նա,
 Այրում ե դեռ ինձ համբույրը նրա.
 Տվել ե նա ինձ սոսկալի յերդում,
 Բոլոր րոճերը. մտքերն իր բոլոր
 Իմոնց հետ եր նա վաղուց զուգորդում.
 Նա ինձ կապանի դավաճանելով...
 Լալիս եմ ահա յեվ քո առաջ, տես
 Ծնրադիր բնկած, յեվ սիրտ չանելով
 Քեզ մեղադրել, աղաչում եմ յես —
 Հետ առի իմ խինդն ու հանգիստը կրկին,
 Նախկին Գիրեյին դարձյալ դու ինձ առի...
 Մի հակահառիր դու ինձ մոչնչով.
 Նա իմն ե միայն, բայց քեզնով ե կույր.
 Արհամարհանքով, խնդրով թե վշտով.
 Զրգվեցրու նրբան, ինչով վոր կուզես,
 Ֆերդվիր ուրեմն (թե յեվ թողի յես
 Խանի կանանց մեջ՝ Ղուրանի սիրուն
 Անցած օրերի հավատը իմ հին,
 Բայց հավատն իմ մոր յեղել ե քո նույն
 Հավատը) յերդվիր նրբանով իմ դեմ՝
 Գիրեյին նորից յես տալ Չարեմին...
 Բայց լսիր. յեթե պարտավոր եմ քեզ...
 ... Ապա յես դաշույն բանեցես զիտեմ.
 Կովկասին մոտ եմ ծնունդ առել յես:



Մատնելով ռազմի հրո ճարակին
Կովկասին մոտիկ յերկրներ բազում,
Ռուսիայի խաղաղ գյուղերը, կրկին
Խանը հետ դարձավ հողը Տավրիկյան
Յեւ իր պալատի մի անջատ մասում՝
Մարիի տխուր, ջինջ հիշատակին
Շինեց մարմարյա մի մեծ շատրվան:
Վերեւում կա խաչ, շուրջը՝ միասին
Կա մահմեդական մի կիսալուսին:
(Խորհրդանիշն այդ, համարձակ անշուշտ,
Հանցանքն և խղճուկ անիմացության):
Կա մի մակագիր, դեռ չեն հարթել այն,
Ու դեռ չեն կրծել տարիներն անկուշտ:
Յեւ այդ գրության գծերով ոտար
Ջուրն և մարմարում ճողփում անդադար,
Սառն արցունք դարձած կաթում հատակին,
Յեւ չի պապանձվում, չի լռում յերբեք:
Այդպես և վողբում մայրը վշտաբեկ
Պատերազմի մեջ ընկած զավակին:
Այն յերկրում ջահել կույսերն ու կանայք
Իմացան մի որ այդ գրույցը հին
Յեւ հուշարձանի անունը նրանք
ԱՐՏԱՍՈՒՔՆԵՐԻ ՇԱՏՐՎԱՆ դրին:



Թողած վերջապես հյուսիսը հեռվում,
Մոռացած խնճուղք, ուրախ կերուխում,
Յես ալցելեցի Բախչիսարայի
Վաղուց մոռացված պալատն ամալի:
Լուռ միջանցքներով շրջեցի այնտեղ,
Ուր այն թաթարը, մարական ազգերի,
Խրախճանքներ եր սարքում խելահեղ,
Յեւ թողած սարսափն արշափանքների,
Թաղվում ծուլության գրկի մեջ շրեղ:


Հեշտանքն ե շնչում մինչ այսօր ել դեռ
Դատարկ պարտիզում չեմ տեսնակներում,
Ձրերն են ցայտում, վառվրոտում վարդեր,
Խաղողի վազերն են վեր վոլորվում,
Յեւ դեռ պատերին շողում ե փռակին:
Յես տեսա խարխուլ, հին ցանկապատեր,
Վորոնց յետեւում, իրենց զարուհին,
Համբերով իրենց թագբեհները սաթ
Ախ ելին բաշում կիներն անագատ:

Յեղա խանական գերեզմանոցում,
Տերերի վերջին այդ ոթնվանում:
Տապանապուներն այստեղ՝ պրսակված
Մարմարաքանդակ ճերմակ չալմայով,
Թվում եր մի պահ՝ լսելի ծայնով
Բախտի պատգամն են հաղորդում մարդկանց:
Ու՞ր են խաները չեմ հարեմք ո՞ւր:
Խաղաղ ե չորս դին, ամեն ինչ տխուր:
Փոխվեց ամեն ինչ, բայց այն ժամանակ
Դրանցով չեմ այնտեղ բնավ սիրտս լի:
Շատրվանների ծայնն ու բուրալի
Շունչը վարդերի հակում ելին ինձ
Դեպի մոռացում, միտքս ակամայից
Տրվում եր հուզման մի անմեկնելի:
Յեւ սավառնաթեւ մի ուրու դարձած
Կույսն եր հայտնվում այնտեղ, իմ դիմաց:

Ո՞ր բալեկամներ, ասացեր, թե ու՞մ
Հայացքը տեսա, թե ու՞մ քնքշալի
Կերպարանքն եր ինձ այնտեղ հետեւում
Անխուսափելի չեմ անվանելի:
Արդյոք Մարիի հոգի՞ն եր մարտը,
Վոր մունջ հայտնրվեց այնտեղ իմ դիմաց,
Թե Ջարեմն եր այն՝ խանդով բռնված
Շրջում հարեմում ամալի չեմ լուռ:

Հիշում եմ հայացքն այնքան սիրելի
Յեւ զեղը նրբա դեռեւս յերկրային


* * * * *






Յերկրագեղով լոկ անդորր կյանքին
 Յեւ մուսաներին, թողած փառք ու սեր,
 Ո՛ր շուտով, շուտով կտեսնեմ կրկին
 Յես ձեզ, Սալգիրի խնդառատ ափեր:
 Լցված հուշերով իմ խորհրդավոր
 Կեղևն լեռների լանջը կապտալուրթ,
 Յեւ կուրախացնեն հայացքս անհագուրդ
 Տավրիկյան ջրերն այնտեղ նորից նոր:
 Մոզական յերկիր, բերկրանք աչքերի!
 Աշխուժ են այնտեղ բլուր թե անտառ,
 Սաթր խաղողի, հակինթները վառ,


Ամալի դարձավ պալատը մոռալ,
 Գիրեյը դաժան՝ այն թողեց դարձալ
 Ու առած նորից ամբոխն իր թաթար
 Արշավեց չարկամ դեպի հողն ոտար:
 Ռազմի փոթորկում նա բառատրոփ
 Յեւ արյունըռուշտ թռչում և տրտում,
 Բայց կա թագնրված միշտ խանի սրտում
 Ուրիշ հույզերի կրակն անափոփ:
 Հաճախ մարտերում այն որհառական
 Թուրն և քաշում նա յեւ զարկի ժամին
 Մ'նում և անշարժ, կանգնում և հանկարծ,
 Ապա խելահեղ նայում և չորս դին,
 Նետում և գույնը ասես սարսափած:
 Ինքն իրեն ինչ վոր բան և փափսում,
 Յեւ արտասուքն և գետի պես հոսում:



Արդեն մտազգլած ու արհամարհված՝
 Հարեմը վաղուց չի տեսնում խանին:
 Յեւ կանայքն աշխտեղ տանջանքի տըրված,
 Ներքինու սառն հսկողութեան տակ
 Պատալում են լուռ: Չկա վրացունին
 Վաղուց նրբանց մեջ: Զրեքի անտակ
 Անդունդի խորքը նստեցին նրան
 Մի որ հարեմի պահակներն անձայն:



Յերբ իշխանունին մեռավ, այն գիշեր
 Ավարտվեց նրա կյանքն եւ տանջալի:
 Հորրան եւ հանցանքն այն խոշոր լինեք,
 Պատիժը դարձյալ մեծ եր. սուկալի:




Յ. Կրեմլյան 97.

Աղագյո Ռեմոն





Հմայքն հյուրընկալ հովտադաշտերի,
Զոհը յե՛վ ջրի յե՛վ բարդինների.
Վրդջը անցորդին իր մոտ և կանչում,
Յերբ առավոտվա ժամին անխըռով,
Լեռների վրրա, առափնյա համբով
Նրա քաջընտել ծին և սրլանում,
Յեվ կանաչավուն ջրերն իր դիմաց.
Այու-Դաղ լեռան ժայռերին փարած
Յեվ շողում են վառ յեվ աղմուկ հանում...



Պատասխանատու խմբագիր՝ Ն. Ջալալյան.—Տեխնի-
կական խմբագիր՝ Լ. Ոհանյան.—Սրբագրիչ՝
Ս. Շահբադյան.—Նկարները՝ Վարդգես Սու-
րենյանի.—Կազմը, տիպոսաթերթերը և շտուգ-
տիւնը՝ Ա. Ղարիբյանի.—Վիճադրական նկա-
րիչ՝ Յե. Դանշոյ։ Պատկեր № 81. Հրատ. № 3947.
Դրամիտի լիազոր Վ—1178. Տիրած 3000։ Յերևան,
Պետհրատի տպարան, II Կոմունյանցի, № 4.

ՀՀ Ազգային գրադարան



NL0311761

